ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 177-Ա/2 «04» 03 2019

# ԱՌԱՆՁԻՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 703-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 21-ի «ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը հաստատելու մասին» N 752-Ն հրամանով հաստատված հավելվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետով.

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ

1. Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի միջոցներով հրատարակված «Աշխարհագրություն 8», «Հայաստանի աշխարհագրություն 9» և «Ինֆորմատիկա 9» դասագրքերի օգտագործման ժամկետը երկարացնել մեկ տարով:
2. Սույն հրամանի հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարին:

**ԱՐԵՎԻԿ ԱՆԱՓԻՈՍՅԱՆ**

/պարտականությունները կատարող/

02537635
ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ
TEXTBOOKS REVOLVING FUND
№ 01
«04» 03 2019 թ.
Երևան Yerevan

Invalid signature

X

ԱՐԵՎԻԿ ԱՆԱՓԻՈՍՅԱՆ

Signed by: ANAPIOSYAN AREVIK 6905860212